

ՏԵՍԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Գրական ուղղությունների, դպրոցների, զանազան գեղագիտական ուսմունքների ամենատարբեր շրջարկներով և դիտանկյուններով անդրադարձները հայ տեսաբանական մտքի, առհասարակ գրականագիտության առաջնահերթություններից են եղել: Հայոց տեսական-վերլուծական միտքը ծանոթացրել, յուրովսանն մեկնաբանել է XVIII-XX դարերի գրական քիչ թե շատ նշանակալի բոլոր հոսանքները, ուղղությունները, գեղագիտական ուսմունքները և վարդապետությունները: Միաժամանակ գոյավորել և ամրագրել է գրական ուղղությունների, դպրոցների և շարժումների, գեղագիտական ուսմունքների, վարդապետությունների ազգային դպրոցը:

Ահա այս խորքում ուշագրավ է Նիկողայոս Ադոնցի սիմվոլիզմի տեսությանը նվիրված «Գրական նշմարներ. դեկադանս եւ սիմբոլիզմ» հոդվածը:

Մեծանուն պատմաբան, աղբյուրագետ, բանասեր, ազգային-հանրային գործիչ Նիկողայոս Ադոնցը՝ ավագանի ազգանունով՝ Տեր-Ավետիքյանը, ծնվել է 1871-ին, Բռնակոթ գյուղում: Համալսարանական կրթությունը ստացել է Սանկտ Պետերբուրգում, ուսանել է պատմաբանասիրական ֆակուլտետում՝ մասնագիտանալով գրականության և արևելյան լեզուների մեջ: Ուսումը կատարելագործել է Մյունխենի, Փարիզի և Օքսֆորդի համալսարաններում: 1916-1920 թվականներին եղել է Սանկտ Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր, 1931-1942-ին՝ Բրյուսելի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ: Մահացել է Բրյուսելում, 1942-ի հունվարի 27-ին:

XX դարասկզբից Ադոնցն վավերական անուն էր եվրոպական պատմաբանասիրության մեջ: Նա հռչակավոր հայագետ է: Հանգրվանային արժեք ունեցող պատմագիտական, բյուզանդագիտական, կովկասագիտական, լեզվաբանական, աղբյուրագիտական, գրականագիտական, արվեստաբանական բազմաթիվ մենագրությունների, հետազոտությունների, հոդվածների հեղինակ: Նրա վիթխարի գիտական ժառանգությունը հաշվվում է ավելի քան հարյուր աշխատություն և ուսում-

նասիրություն հայերեն, անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն լեզուներով: Բավական է սոսկ հիշատակել Ադոնցի այնպիսի դարակազմիկ ուսումնասիրություններ, ինչպիսիք են «Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում», «Դիոնիսոս Թրակացին եւ հայ մեկնիչները»:

Այս հանրագիտարանային գիտելիքների տեր անհատականությունը չէր սահմանափակվում սոսկ հնագույն և միջնադարյան դարաշրջանների ամենատարբեր իրողությունների և խնդիրների համապարփակ քննությամբ և ուսումնասիրությամբ: Նրա գիտական հետաքրքրությունների ոլորտում էին նոր շրջանի և XX դարի հայ և համաշխարհային արվեստը, գրականությունը, գեղագիտությունը: Ինչի պերճախոս վկայություններից է թե՛ նրա հիմնադրած և խմբագրած «Բանբեր գրականության և արվեստի» հանդեսը, թե՛ ընթերցողին ստորև հրամցվող հոդվածը սիմվոլիզմի մասին:

Նոր և XX դարի համաշխարհային և հայ արվեստի, գրականության, գեղագիտության, փիլիսոփայության պարագային ևս Ադոնցն առանձնանում էր հիմնավոր գիտելիքներով, օրինակելի իմացությամբ: Այս իրողությունը բազմիցս արձանագրվել է նրա մտերմությունը վայելելու բախտն ունեցած ժամանակակիցների կողմից:

Ադոնցը բացառիկ անհատականություն էր նաև կյանքում: Մտավորականի, ազնվականի տիպար, սիրված պրոֆեսոր, ընկեր, վստահելի և անբավելի բարի մարդ, ում անվարան ապավինում էին ցանկացած պահի: Բոլորովին պատահական չէ, որ Մուշեղ Իշխանը, օրինակ, հայոց մեծերի շրջանակում հետևյալ բնութագրականն է վերապահել նրա համար. «Հայաստանն իսկ էր կարծես Ն. Ադոնց, անոր լաւագոյն մարմնացումը, անոր մարդկային պատկերը: Հայ մարդն էր ան՝ բառին աւանդական, արդիական եւ ազնուական իմաստով: Հայոց հիմաւուրց մշակոյթի, հերոսական պատմութեան, գեղեցկութեանց եւ հայ նկարագրի առաքինութիւններուն ապրող բերդը, որ գիտէ ուրախութիւն եւ հպարտութիւն ներշնչել: Մեր հողին բոլոր եւ մեր լեռներուն շունչը ունէր ան իր մէջ: Եթէ կարելի է մարդատիպարով մը բնորոշել ու երեւակայել ամբողջ երկիր մը, փրոֆ. Ադոնց առաջիններէն մէկն էր ապահովաբար Հայաստանը ներկայացնող մեր մտաւորականներուն» (Մ. Իշխան, «Իմ ուսուցիչներս», Պէյրուս, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 1984թ., էջ 49):

Հայ նոր գրականության և արվեստի պատմական համապատկերում հիրավի բացառիկ արժեքավոր երևույթ է Նիկողայոս Ադոնցի խմբագրած «Բանբեր գրականության և արվեստի» վեցամսյա հանդեսը, որը լույս է տեսել Սանկտ Պետերբուրգում, 1903-1904 թվականներին: Գրողների ու գրականագետների, պարզապես շատ գրասեր մարդկանց

առաջին ծանոթություն-հանդիպումը մեծանուն գիտնականի հետ նրա «Բանբեր»-ի շնորհիվ է տեղի ունեցել: Երիցս ճշմարիտ է Մուշեղ Իշխանը, երբ գրում է, թե պատանեկան օրերին «...հիացիկ հափշտակութեամբ մը կը թղտատէի իր հրատարակած պատկերազարդ «Բանբերներ»<ը>» (Ս. Իշխան, նույն տեղում, էջ 43): Ճիշտ է, «Բանբեր»-ը հրատարակվեց ընդամենը երկու գրքով (գիրք Ա., 1903թ., 254 էջ, գիրք Բ., 1904թ., 217 էջ), սակայն թեմատիկ ընդգրկմամբ, տպագրական որակով, նյութերի ընտրության և մատուցման մշակությամբ XX դարասկզբի հայոց հոգևոր-գեղարվեստական միջավայրի ներկայանալի ձեռքբերումներից է:

Ի շարս իմացական մտքի, գեղագիտության և գեղարվեստի բազմաթիվ խնդիրների մասին հոգվածների ու հաղորդումների, հանդեսը դարձավ նաև գրականության պատմության և տեսության արժեքավոր ուսումնասիրությունների, գրախոսությունների բեմ: Բավական է սոսկ հիշատակել, որ բացի Աղոնցի խնդրո առարկա հոդվածից, այստեղ են տպագրվել Արփիար Արփիարյանի «Արևմտյան հայոց արդի գրականությունը» պատմաքննական ուսումնասիրությունը, Նիկոլ Աղբալյանի ««Երգեր ու վերքեր»-ից հետո» լրջմիտ գրախոսությունը Ավետիք Իսահակյանի «Բանաստեղծություններ» ժողովածուի մասին:

Սիմվոլիզմի տեսական անդրադարձներն ու փորձընկալումը հայոց գրականագիտության համար XX դարասկզբից դառնում են խնդրական իրողություն: Պարբերականներում լույս են տեսնում զանազան գրություններ՝ նվիրված այս գրական դպրոցի գեղագիտությանը, հեղինակներին: Քննադատությունն անդրադառնում էր սիմվոլիզմի պատմության և տեսության գրեթե ամբողջական շրջանակին: Հայ հեղինակները գրական այս ուղղությանը նվիրված իրենց գրություններով ամենատարբեր նպատակներ էին հետապնդում: Սիմվոլիզմին նվիրված հոդվածների մի մասը հայ հանրությանը ծանոթացնում էր գրական դպրոցի ստեղծման պատմության, իմացաբանական ենթահողի, եվրոպական ականավոր սիմվոլիստ գրողների ժառանգության հետ: Այդօրինակ գրությունները սիմվոլիզմի պատմատեսության և գեղագիտության սոսկ դրական վերաշարադրանքն էին: Հոդվածների և ուսումնասիրությունների մի մասն էլ եվրոպական սիմվոլիզմը հայ ընթերցողին ներկայացնելը զուգահեռում էին մեզանում այս գրական ուղղության դրսևորումների քննությամբ ու մեկնաբանությամբ, կարելի վերլուծություններով փորձում գնահատել և արժևորել սիմվոլիզմի եվրոպական և հայկական արտահայտությունները: Պարզապես հիշատակենք սիմվոլիզմին նվիրված հայկական տեսության որոշ նշանակալի գրություններ. Ե. Արմեն «Սենայո-

լիք բանաստեղծությունը» («Ծաղիկ», 4. Պոլիս, 1905, թիվ 23), 4. Տեր-Սահակյան «խորհրդապաշտ դպրոցը հայ գրականության մեջ» («Բագմավեպ», Վենետիկ, 1905, թիվ 11), Ս. Հակոբյան «Սիմվոլիզմը դրամայի մեջ» («Մուրճ», Թիֆլիս, 1906, թիվ 3, 4-5), 4. Ջարյան «Սենյակիզմ եւ քլասիսիզմ» («Ազատամարտ» շաբաթաթերթ/հավելված, 1911, 2 հունվարի, տե՛ս նաև 4. Ջարյան «Նավատոմար», Երևան, «Սարգիս Խաչենց» հրատ., 1999, էջ 36-42), Գ. Պիճիկյան «Սիմվոլիզմի փիլիսոփաբանաստեղծ Մորիս Մետերլինկ» («Նոր խոսք», Բաքու, 1912, թիվ 3-4):

XX դարասկզբի սիմվոլիզմի հայկական տեսության նշանակալի արտահայտություններից է Նիկողայոս Ադոնցի «Գրական նշմարներ. դեկադանս եւ սիմբոլիզմ» հոդվածը: Մի ուսումնասիրություն, որտեղ, թեև սեղմ, սակայն տարողունակ կերպով ներկայացվում է եվրոպական գրականության համապատկերում սիմվոլիզմի ծագման, զարգացման պատմությունը, գրական այս դպրոցի փիլիսոփայական, իմացաբանական հիմքն ու հիմնական ստորոգությունները: Ադոնցն անդրադառնում է սիմվոլիզմի գեղագիտության չափորոշիչներին, բացատրում և մեկնաբանում սիմվոլիստական գրականության շրջարկում սիմվոլի էությունը, անդրադառնում է նաև գրական այս դպրոցի հանգուցային հեղինակներին:

Ինչպես ասացինք Ադոնցի այս գրությունն առաջին և ցարդ միակ անգամ լույս է տեսել նրա «Բանբեր գրականության և արվեստի» հանդեսի առաջին գրքում (1903թ., էջ 153-173): Ուսումնասիրության սույն տպագրությունն՝ ըստ այդ հրատարակության: Պահպանել ենք հեղինակային ուղղագրությունը և կետադրությունը, սրբագրել միայն ակնհայտ տպագրական վրեպները, փոփոխել ենք մի շարք հասկացությունների, բառերի և հատուկ անունների գրությունը՝ դրանք համապատասխանեցնելով արդի ուղղագրությանը, ինչպես օրինակ՝ սիմբոլիստ, Սոլովիե, Բոդլեր, Թանգ, որպես զի – սիմբոլիզմ, Սոլովյով, Բոդլեր, Թանկ, որպեսզի և այլն:

Հոդվածի սույն հրատարակության մեջ Ադոնցի կողմից մեջբերված բոլոր օտարագիր բառերի, հղումների թարգմանությունները կատարել ենք բնագրում, փակագծերի մեջ: Այն դեպքերում, երբ օտարալեզու թարգմանություններն Ադոնցին են, բնագրում՝ փակագծերի մեջ, նշել ենք՝ «թարգմ. հեղինակի»: Հանել ենք միայն այն օտարագիր անունները, ստեղծագործությունների վերնագրերը, որոնց հայերենը հեղինակը զուգահեռ նշել է: Օրինակ՝ «Չարի ծաղիկները» – «Les Fleurs du mal» (տե՛ս «Բանբեր գրականութեան եւ արուեստի», 1903, գիրք Ա., էջ 154):

Յանկանում ենք շնորհակալություն հայտնել գրականագետ, թարգմանիչ Գուրգեն Գասպարյանին՝ Ներվալի և Վերլենի բանաստեղծությունների թարգմանության համար:

Բողերի «Հարասություններ սատանային» բանաստեղծության հայերենը՝ Հենրիկ Բախչինյանի թարգմանությամբ (տե՛ս Շ. Բողեր «Չարի ծաղիկներ», Երևան, Համալսարանի հրատ., 1990, «Աղերսներ սատանային», էջ 134), Ժիդի «Տրակտատ Նարգիզի մասին»-ը՝ Աննա Հակոբյանի և Վարուժան Նալբանդյանի թարգմանությամբ (տե՛ս Ա. Ժիդ, «Նեղ դուռը», Երևան, «Ա և Ս» հրատ., 1994, էջ 182):

Կարծում ենք, հազվագյուտ գործածության պատճառով, բացառության կարիք ունեն ուսումնասիրության մեջ հանդիպող հետևյալ բաները.

եպերանքը – մեղադրանքը, պարսավանքը,

ղօղուն – պահված, թաքուն, ծածուկ,

ապավարկել – հեղինակազրկել, անվանարկել, վարկաբեկել:

Վերջում հարկ ենք համարում փոքրիկ անվանացանկով ներկայացնել Ադոնցի հոդվածում հիշատակված ընթերցողին քիչ ծանոթ որոշ անուններ:

Մորիս Բարես (1862-1923) – ֆրանսիացի վիպասան, թատերգակ, բազմաթիվ փորձագրությունների և օրագրությունների հեղինակ, հրապարակախոս, տեսաբան, քննադատ:

Գրական ասպարեզ է մուտք գործել XIX դարի 80-ական թվականներից: Հեղինակն է «Ես-ի պաշտամունքը» («Բարբարոսների հայացքի ներքո», 1887, «Ազատ մարդը», 1889, «Բարենիսի այգին», 1891), «Ազգային էներգիայի վեպ» («Անհողներ», 1897, «Կոչ զինվորին», 1900, «Նրանց դեմքերը») եռագրությունների, «Ամրոց Արևելքում» («Գերմանիային ծառայելիս», 1905, «Կոլետա Բոլոմ», 1909) երկգրության:

Նրա ժառանգության հանգուցային ստեղծագործություններից են «Օրենքների թշնամին» (1892), «Ոգեշնչված բլուրը» (1913) վեպերը:

Բարեսի լավագույն փորձագրություններն ու օրագրություններն ամփոփված են «Արյան, կրքի և մահվան մասին» (1894), «Ուղևորություն դեպի Սպարտա» (1906), «Ֆրանսիական համակրանքներ» (1903) ժողովածուներում:

Ժան Մորեսա (1836-1910) – ավագանի անունով՝ Յանիս Պապահամանդոպուլոս, հունական ծագումով ֆրանսիացի բանաստեղծ: 1886-ի սեպտեմբերի 18-ին «Ֆիգարո» թերթում լույս է տեսել նրա «Սիմվոլիզմի հռչակագիր» հոդվածը:

«Տատրակներ և օծեր» (1878, հունարեն), «Կանտիլենաներ» (1886), «Կրքոտ ճամփորդ» (1891), «Ստանսներ» (1-6-րդ գրքեր՝ 1899-1901, 7-րդ գիրք՝ 1920) բանաստեղծական ժողովածուների հեղինակ:

Շառլ Մորիս (Մորաս) (1868-1953) – ֆրանսիացի բանաստեղծ, քննադատ, տեսաբան: Գրական գործունեությունը սկսել է 1890-ական թվականներին իբրև բանաստեղծ և քննադատ: Նրա ծրագրային գործերից է «Մտավորականության ապագան» (1905): Հեղինակն է «Վենետիկ-ի սիրեկաններ» (1902), «Ռոմանտիզմ և հեղափոխություն» (1925) գրքերի: